11 նոյեմբերի 2010 թվականի N 1464 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 262-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Գրականության հրատարակում», «Ոչ պետական մամուլի հրատարակում», «Աջակցություն գրականության հրատարակմանը» և «Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում» ծրագրերով 2010 թվականին նախատեսված հատկացումների բաշխման մասին» N 262-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. աղյուսակի «2. Մշակութային ժառանգությունը ներկայացնող գրականություն» բաժնի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. աղյուսակի «3.1. Հայ պատմիչների և դասական գրողների հոբելյանական հրատարակություններ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին կետով.

«	7.1.	Հեղինակային խումբ	«Վ. Տերյան - 125. բանաստեղծություն» (ընտրանի)	8.0	500	2600	1300.0	».

2) որոշման N 3 հավելվածի՝

ա. աղյուսակի «Գիտահանրամատչելի գրականություն» բաժնի 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. աղյուսակի «Հուշագրություն և այլ գրականություն» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 29-րդ կետով.

«	29.	Պապիկյան Հովհաննես Սահակյան Շուշանիկ	«Լույս ...»	«Ամարաս» տպարան» ՓԲԸ	600.0	»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ